<Անալիտիկ> ՓԲԸ 2012թ. տարեկան ընդհանուր ժողովի

Օրակարգ

1. Ընկերության 2012թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2012թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության տարեկան շահույթի/վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Անալիտիկ>> ՓԲԸ 2012թ. տարեկան

ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ որոշման)

ք. Երևան **11 հունիսի 2013թ.**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

1. Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար՝ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով
2. Կ. Ղահրամանայն	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավար
3. Բ. Գյուլումյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
4. Գ. Սիմոնյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
5. Ժ. Հարությունյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
6. Ս. Սարգսյան	<<Անալիտիկ>> ՓԲԸ գլխավոր տնօրեն խորհրդակցական ձայնի իրավունքով
7. Վ. Իսոյան	<<Անալիտիկ>> ՓԲԸ գլխավոր հաշվապահ

Ժողովի նախագահ՝ Ա. Մովսիսյան

Քարտուղար՝ Ժ.Հարությունյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ընկերության 2012թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2012թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության տարեկան շահույթի /վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց ընկերության 2012թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը /կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՀԱՐՑ 2

Լսվեց ընկերության վերստուգողի եզրակացությունը /կցվում է/:

Ներկայացնող-Գ. Սիմոնյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունելով վերստուգողի եզրակացությունը, ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> ենթակետով, հաստատել <<Անալիտիկ>> ՓԲԸ 2012թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

ՀԱՐՑ 3

Լսվեց ընկերության 2012թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը /կցվում է/:

Զեկուցող- Վ. Իսոյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> ենթակետով, հիմք ընդունելով ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի եզրակացությունը, հաստատել ընկերության 2012թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

ՀԱՐՑ 4

Լսվեց ընկերության 2012թ. շահույթի հաշվի հաստատման հարցը /տեղեկանքը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> ենթակետով, հաստատել ընկերության 2012թ. տարեկան զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 8415.0հազ. դրամ և զուտ շահույթը՝ հաշվի առած ավելացումները /շահութաբաժնի հաշվարկի 060 տող/ 9050.0 հազ. դրամ:

ՀԱՐՑ 5

Լսվեցին ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցերը /առաջարկությունը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> ենթակետով, հաստատել ընկերության 2012թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի /հաշվի առած ավելացումները/ 50 %-ը՝ 4525.0 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5 %-ը՝ 420.0 հազ. դրամն ուղղել ընկերության պահուստային հիմնադրամ.

մնացած՝ 3470.0 հազ. դրամը /8415.0-4525.0-420.0/ թողնել որպես չբաշխված շահույթ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**